


ԲԱՅՆԵԳԻՆ

Ի Պուլկարիա
Տարեկ. 10 ֆր.
վեցամս. 5 "

Արտատոհման
Տարեկ. 12 ֆր.
վեցամս. 6 "

ՎԱՆԽԻԿ



ՊԱՅՄԱՆՔ

Գրութիւնք եւ
շին արուիր:

Հասցէ
DIRAN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE

ՅԱՐԱԹԱՅԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՒԵՅՏԱԿԱՆ

Դ. ՏԱՐԻ

ՅՈՒՆԻՍ 3 ՇԱՐԱՎ 1900

Թիի 165

ՄԵՐ ԶՐԻԱՃԱՐԱԿՆԵՐԸ

Ժողովուրդի մը յառաջդիմութեան էն առաջին եւ էն գլխաւոր ազդակներէն մին է ընթերցանութիւնը:

Մտէք լուսամիտ ժողովուրդն ինչ խաւին մէջ բարձրագոյն դասակարգէն սկսած մինչեւ ամենաստորին դասակարգը, մասադատի օրիգլէն սկսած մինչեւ յնդած պառաւը, ամենքն ալ կը վառին ընթերցասիրութեան բուռն տենչով. որ միակ բարոյացուցիչ դեղն է մտքի կազդուրման եւ սրտի աղնուայման:

Դժբաղդ վշտահարը հոն կը գտնէ հոգեկան այնպիսի սիւսկանք մը, զոր չպիտի կրնար ուրիշ եւ ոչ մէկ տեղ գտնել, որչափ ալ արհեստական միջոցներով միտքի զարգացման ամբիջ հանդամանքներ ստեղծուէին իրեն համար:

Ընթերցանութեամբ միտքը, հոգին է, որ գոհացում կ'ստանայ եւ այդ մտային բազմակողմանի գոհացումով կը սկսի որոշ տեսնել իր անհուն վշտերու տակաւ թեթեւացումն ալ:

Միլիոնատէրն է, որ աշխարհի բոլոր ժխորէն պահմը հեռանալու անդիմադրելի փափաքէն մըղուած, ամբան տաք օրերը իր գիւղային դղեակներէն մէկուն մէջ անցունել կ'որոշէ, բայց եկուր տես որ այդ ժխորին իրական արձագանքը եղող թերթերը մտքի պաշարներով առլցուն իր հետքը չեն թողուր երբէք եւ աշխարհի այդ հեռաւոր ու միեւնոր անկիւնին մէջ ալ կը գտնեն զինքը օրը օրին:

Ամենէն յետին աղբատն է լուստու պոյա-

նին, որ իր քրտնաթոր աշխատութեան ժամերէն անպատճառ կը գտնէ վայրկեաններ, ուր անթուրթեան հաւասար բնաղբով մը կը նետուի թերթերուն վրայ եւ կը լափէ զանոնք անյագօրէն:

Ամենքին համար ալ մտքի պահանջները հաւասար են անթուրթեան բնաղբին. իրենց համար չը կայ բան մը, որ այդ երկու հզօր պահանջներուն միջեւ տարբերութիւն դնէ եւ երբ մենք նկատողութեան առնենք ընթերցասիրութեան այս գեղեցիկ հոսանքը քաղաքակիրթ աշխարհի մէջ, շատ գիւրաւ պիտի լուծենք անոնց լաւագոյն թերթերու գոյութեան գաղտնիքը ու չափ մը պիտի դնենք այն դառն գանգատներուն թէ ինչու մենք ալ չունենանք անոնցինն պէս թերթեր:

Մեր մէջ ընթերցանութիւնը միմիայն երկու շղանալի մէջ մուտ գտած է. Մին ծանօթ է իր գիտաւորի հազուադէպ երեւոյթովը, այն նեղ շրջանակը, որ իսկապէս ճանչցած է վճարմամբ կարդալու հարկը եւ ինքզինքը նուիրած այդ քաղցր հարկին. Միւսը ճիւղաճարակներու շրջանակին է, գողերու բանակը, որ նոյն իսկ անտարբերութեամբ բաղդատմամբ շատ ու պատկառելի թիւ մը կը ներկայացնէ մեր մէջ դժբաղդաբար:

Ասոնք կարծես Հիդրայի գլուխներ ունին, մէկը զարնես, ուրիշ կը բռնանի. որճարանի եւ գինեւորան զսուկներ, որոնք սոմեն խիպ ու ամօթ մէկդի նետած, իրենց ճիւղաճարակութեամբ բոն գործ կընեն զինուոր, ինչպէս ըսինք վերեւ, ժողովուրդին յառաջդիմութեան էն գլխաւոր միջոց-

ներէն մէկուն, այն է ընթերցանութիւնը տարածելու կոչում ունեցող թերթերու քաջալերութեան գործին դէմ:

Կարժէ ուրեմն, որ այդ անուղղաները Հայելիի փրկարար տուչին մէջ լուանք մերթ ընդ մերթ եւ ցոյց տալով իրենց կործանարար ընթացքը, խարազանենք զանոնք չեչտակի:

Եւ մենք կը խոստանանք մեր բաժնին մօտաւորապէս զբաղուիլ ատոնցմով, տխուր էջ մը բանալով Հայելիի սիւնակներուն մէջ:

ԾԱՆՕԹ

ԱՅԵԼԻ

Վեհ. Հայրապետը յատուկ կոնդակով մը ականակուռ լանջախաչ մը շնորհած է Պուլկարիոյ այցելու հովիւ Գեր. Բարթուղիմէոս Ծ. Վարդապետ Պաղճեանի:

ՁԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՏՈՒՐԲԸ

—Հայոց եւ. Հայ—հռոմէականաց Պատրիարքարաններն եւ Բողոքականաց Ազգապետարանն հաղորդուած Իրատէի մը համաձայն, վերջին երեք տարիներու զինուորական տրոց գումարէն պիտի զեղչուի ննջեցեալներու եւ բացականերու բաժինը, մէկ տարուան տուրքն ամբողջովին պիտի շնորհուի եւ մնացեալ երկու տարուանը 4 տարուան մէջ պիտի գանձուի: Ըստ այսմ, պէտք եղած հրամաններն հաղորդուած են այն կուսակալութեանց, որոց կը վերաբերի սոյն իրատէն... (Բոժ.—Միևեհր աղթը ընելու համար):

—Էջմիածնէն կը գրեն թէ Ս. Հայրապետին ծննդեան 80ամեայ եւ գրական գործունէութեան 50ամեայ տարեդարձին հանդէսները ապրիլ 4ին մեծ շքով կատարուեր են Էջմիածնայ մէջ: Նոյն իրիկունը Գէորգեան ճեմարանին մէջ գրական հանդէս մը տեղի ունեցեր է ուսանողներու եւ ուսուցիչներու մասնակցութեամբ, եւ ի ներկայութեան Մայր Աթոռի միանութեան անդամներուն:

—Ապրիլ ամսոյ մէջ Ազգ. Հիւանդանոցի եղած

նուիրատուութիւններուն գումարը հասած է 11, 803 զրուշի:

—Նպաստից Յանձնաժողովը որոշեց 50 ոսկի զրկել Մշոյ որբանոցին, ոստայնանկութեան արհեստարան մը բացուելու համար:

Որբերու արհեստանոցներու համար Յանձնաժողովին կողմէ ցարդ վճարուած գումարները իբրեւ գումարադուլս յատկացնելով իւրաքանչիւրին, որոշեց անոնց համար յատուկ տետրակ մը ունենալ, եւ արհեստանոցներէն գոյացած արտադրութիւններն ու արդիւնքը մի առ մի նշանակելով շահը որբերու ապագայ բարօրութեան յատկացընել:

—Ապրիլ 29ին Մուշաֆէրէտտին Շահը Դավրէժ մտեր է հանդիսաւորութեամբ: Վիճակին Առաջնորդ Տ. Սահակ եպիսկ. Այվատեան մասնաւոր ուղեւոր մը քաղաքէն 2 ու կէս ժամ հեռաւորութեամբ չորս երեւելի Հայ վաճառականներ զրկեր է, եւ քաղաքէն 1 ու կէս ժամ հեռաւորութեամբ, ինքը անձամբ դիմաւորելու երթալով ներկայացեր է Շահին, որ Հայ հպատակներուն նկատմամբ իր ունեցած սէրը յայտներ է:

—Ս. Էջմիածնի գանձարանին մէջ կարգ մը հոլանտական արժեթուղթեր կան որոնց տարեկան տոկոսը յատկացուած էր Միացեալ Ընկերութեան կողմէ ժամանակին Ալաշկերտի մէջ բացուած վարժարանին: Այդ գումարին երկու տարուան տոկոսը 160 ոսկիի չափ գումար մը զրկուած է այս անգամ Ս. Հայրապետին կողմէ Պատրիարքարան, եւ այդ գումարով է որ Նպաստից Յանձնաժողովոյ վերջին նիստի որոշման համեմատ պիտի մաքրուին կարգ մը ուսուցիչներու Միացեալէն ունեցած պահանջները:

ՁԵԿՈՅՑ — Տեղւոյս «Արշալոյս» տիկնանց մասնաճիւղին տուած պատասխանը յաջորդ թերթով պիտի հրատարակենք:

—Թաթար բաղարճըքէ մեղ կը գրեն թէ, հոն գտնուող Գէորգ վարդապետ Նալբանտեան, տեսնելով որ Պատրիարքարանը ըստ Սահմանադրութեան օրինաւոր գտնելով վաւերացուցած է ընտրութիւնը տեղւոյն նորընտիր Թաղ. խորհուր-

դին որ իրեն (վարդապետին) համամիտ չեղող անձնաւորութիւններէ կը բաղկանայ, կ'ուզէ այդ ընտրութիւնը ոչնչացնել, ու վերջապէս ձեռքի տակէ կը յաջողի համոզել տեղացի կարգ պարզամիտները աղերսագրով խնդրելու տեղական կառավարութեանն որ Պատրիարքարանի վաւերացումը բեկանելով, կառավարութիւնը ինքը իր հսկողութեանը տակ թալ. խորհրդոյ նոր ընտրութիւն կատարել տայ: Այս առաջարկը որ իր տեսակին մէջ առաջինն է, ճամբայ պիտի բանայ օտար ոտնձգութեան մեր Հայաստանեայց ազատ եկեղեցիին մէջ, շնորհիւ անոր մէկ առժանատու պաշտօնէին և կարգ մը Թաթար բազարճըքցի ազգայնոց. այն զինուորեալ եկեղեցիին կրօնք, որ դարերէ ի վեր կը մաքառի իր ազատութիւնը օտարին յափշտակել չտալու համար:

Տեսէ՛ք թէ կուսակցամտութիւնը մինչեւ ո՞ր կը մղէ կ'որ զմեզ . . . :

— Ծիլիպէէն ալ կը գրեն թէ, տեղւոյն ազգային վարժարանի տնօրէն Պ. Վահան Շահրիման այս անգամ սաստիկ զանակօծած է Յալոբ Ադամեան անուն անձին երկրորդ զաւակն ալ, որ հիւանդացած է և ըստ բժշկական տեղեկագրի 10-12 օրէն հազիւ պիտի կարենայ եղեր օտքի ելլել: Գանակօծեալին հայրը որ առաջին անգամ ներսը էր, ալ այս անգամ դատ բացեր է յիշեալ տնօրէնին դէմ:

Բոժ. — Իր ամեն գրածներուն աւատենախօսութիւններուն մէջ «Վեր բռնենք, վարժարանները վեր բռնենք» պրոպագոնդ այդ պարոնը՝ իր վեր բռնենքները ուսանողաց ուրքերուն համար ըսած ըլլալու է, որպէս զի ուղածին պէս անարգել գանակօծէ զանոնք:

Թ Ղ Թ Ա Կ Ց Ո Ւ Թ Ի Ի Ն

Բարիկ 6 Յունիս

Անցեալ կիրակի Եւրոպոյ հայոց առաջնորդ Տ. Գեորգ եպիսկ. Իւթիւճեան՝ Բարիկի մատրան մէջ բարոյ խօսելով, յորդորեց ժողովուրդը զարկ տալ եկեղեցիի մը շինութեանը համար. ըստ մեզ, այս գործը ի գլուխ հանելու համար միայն մէկ միջոց կայ. այն է Տ. Ա. Էգնատեանի ատենապետութեամբ Մասնախումբ մը կազմել ու գործը անոր գործունէութեանը: Եանձնեւ Առար-

կողներ կան թէ Տիար Էգնատեան կ'ուզէ եղեր իր անունը արձանագրել տալ Մատրան վրայ. բայց պէտք է գիտնալ որ երբ երթալիք ծախքին կէսէն աւելին ինքը կը վճարէ, այն ատեն իրաւունք կ'ունենայ իր այդ սատարութիւնը յիշատակելու ժողովրդեան անուան հետ միատեղ. ասոր օրինակները ուրիշ տեղեր ալ տեսնուած են:

Աւարտութեամբ իմացանք թէ Տիար Մարկոսեան խոստացեր է 5000 Փր. տալ երբ մատրան շինութիւնը սկսի:

* *

Երկու համակրելի հայ երիտասարդներ, Պ. Պ. Արտաշէս Նէտուրեան և Խաչիկ Սարգիսեան, աշակերտ կամուրջներու և խճուղիներու ազգային վարժարանին, փայլուն յաջողութեամբ աւարտեցին իրենց դպրոցական շրջանը և արժանացան Տիքթօլի:

* *

Արուեստահանգէսի Պարսկական բաժնին ցուցադրողները մեծ մասամբ Հայեր են, որոնց մէջ Պ. Պ. Քէլէկեան, Լեւոն Ճէվահիրճեան ևն. Իսկ Տ. Էգնատեան թանկագին ադամանդներ ցուցադրած է Գաղ. բաժնին մէջ որոց արժէքը կրնայ բարձրանալ մինչև երկու միլիոն Փր.ի: Տիար Էգնատեան ադամանդագործի մեքենա՞վ մըն ալ ղեկավար է հոն, ուր գործաւորներ կ'աշխատին և ժողովուրդը ապշած կ'անցնի այդ արքայիկեան առջեւ: Այդ բոլոր գործերը որ բաւական ընդարձակ տարածութիւն մը կը գրաւէ արուեստահանգէսին ոսկերչաց ճիւղին մէջ, կը գտնուին Տիար Սիսակ Աշճեանի տնօրէնութեան ու աշակուրջ հսկողութեան տակ:

Թրքական բաժնին մէջ ցուցադրած է Պ. Ա. Թահստաճեան ճարտարապետակա յատակագծեր, Պ. Սեփոն Պէգիրճեան ցուցադրած է հիանալի ալպիւմ մը, Իսկ Պրք. Մ. Սփաճեան և Յ. Գալըպճեան արժէքաւոր հնութիւններ ցուցադրած են:

Թրքական տաղաւարին թատրոնը կը ներկայացնէ ի մէջ այլոց գրքո՞ւ գալգամի և ֆէօյխի խաղեր. երկսեռ դերասանական խումբը կը բաղկանայ Սիւրիացի հրեաներէ, որոնք ոսկեճամուկ զգեստներ հագած ու սակեշար մանեակներով կուրծքերնին գոցած են, ու ձեռքերնին ալ ունին չալաւաւներ: Նուագներն է չորրորդա, զիլ, չիթրէ և աղաւաւ և սարսուփա: Ալ կրնաք երեւակայել ժողորդ:

ԱՐԳՈՍ

Отговорникъ М. Сконевъ
Печатница „Взаимность“ — Варна.

Պ Տ Ո Յ Տ

ԲԱՐԻՉԻ ԱՐՈՒԵՍՏԱՀԱՆԴԵՍԻՆ ՄԷՉ

3

Սպանիական ճաղատարը.—Մէնի Եզերքին վերայ Գերմանիոյ եւ Մոնաքոյի տաղաւարներուն միջեւ կը բարձրանայ Սպանիոյ տաղաւարը, սիրուն շէնք մը, սպանիական Վերածնութեան օճով շինուած: Անոր զանազան մասերն ընդօրինակուած են պատմական եւ արուեստագիտական երեւելի յիշատակարաններէ եւ հաճելի տպաւորութիւն մը կը թողուն այցելուներուն վրայ: Սպանիական պալատը մասնաւորներու ցուցադրութեանց յատուկ բաժին չունի: Ամբողջովին դրաւում է ազգային արհեստագործութեան հնագոյն արտադրութիւններով: Խնամակալ թաղուհին բարեհաճած է բանալ իր պալատին հնութեանց թանկագին գանձարանը, նախանձելի դիրք մը տալու համար սպանիական բաժնին: Ցուցադրուած առարկայից մէջ ի մէջ այլոց մասնաւոր ուշադրութիւն կը գրաւեն Մատրիտի պալատին հին գորգերն որք տաղաւարին պատերը կը զարդարեն: Ասոնց մէջէն ամենակարեւորներն են գորգ մը որ Հուսմը կը ներկայացնէ եւ դնում է 1550ին Ֆրիւ Բ. Թագաւորին կողմէ: Աւրիշ մը 1531ին շինուած, կը ներկայացնէ տէրունական ընթրիքը, եւ վերջապէս երրորդ մը, բուրգով եւ ոսկիով բանուած, թունուղի նուաճումը ցոյց կուտայ եւ շինուած է 1546ին Կարալոս Ե. ի հրամանաւ: Առաջին յարկին մէջ նշանակութեան արժանի է Կարթուսի գահուն ամբհովանին, որուն տակ հարթ քանդակ մը արքայական ընտանիքը կը ներկայացնէ: Սպանիական կառավարութիւնը զրկած է նմանապէս ազգային թանկարաններէն՝ շքեղ պարեգոտներ, հին զէնքեր, զրահներ եւ: Բոլոր այս հոյակապ աննման առարկաներ ի ցոյց դրուած են մասնաւոր ապակեդարաններու մէջ եւ այցելուներուն սքանչացում կը պատճառեն:


Շուէճի ճաղատարը.—Շուէճի տաղաւարը Ալմայի կամուրջին կողմէն երրորդն է օտար ազգաց տաղաւարներուն մէջ: Ցաղաւարին շէնքը ամբողջովին եղեւին փայտէ է արուեստագիտական շքեղ քանդակներով եւ դրօշադարդուած է ազգային գոյներով, որք ոսկեփառ կը ծածանին կիսակայմերու վրայ: Պալատին ներքին մասը կը

զրաւէ բոլորաձեւ սրահ մը, ուր մասնաւոր ապակեփեղկերու մէջ ի ցոյց դրուած են ազգային ճարտարագործութեան եւ տեղական արտադրութեանց հետաքրքրաշարժ նմուշներ: Հոսա՝ նրբաթել զործուածներ եւ սիրուն ժանեակներ, հունա՝ կռածոյ ոսկիէ շինուած շահեկան առարկաներ, գործ Լաշոնիացի սոկերիչներու, տելի հեռուն ճարտար գործաւորներ զեղեցիկ գորգեր կը դորձեն հանգիստաւաններու, աչքին առջեւ: Այս ամէնուն մէջ մասնաւոր ազգային ուշադրութեան արժանի են Օսկար Բ. Թագաւորին զահակալութեան 25րդ տարեդարձին առթիւ նուիրուած զանազան թանկագին առարկաներ, զորս թագաւորը կաշմակերպիչ յանձնախումբին տրամադրութեան տակ գրած է Արուեստահանգէսի բովանդակ տեւողութեան միջոցին: Ասոնց մէջ կը գտնուի արծաթի վրայ փորագրուած ուղեքձ մը զոր Շուէտացի ազատ—որմնագիրները նուիրած են Թագաւորին, Նշանակութեան արժանի են նաեւ երկու սքանչելի տեսարաններ, որոնցմէ մէկը Սթոքհոլմի նաւահանգիստը կը ներկայացնէ, ահառ գիշեր մը եւ միւսը, ձմեռ գրչեր մը Լաշոնիոյ մէջ, հիւսիսային ցուքերով, սառչոյցներուն վրայ բեկեւեկուն:

(Շար)

8.

ԺԱՄԱՆՑ



ԵԶԱԿԱՆ ԴԱՏ ՄԸ

Մանկեւորեմ մայիս 30 քուակաւով մեղի կը գրեն

Երէկ արտեղ դատ մը տեսնուեցաւ, իր տեսակին մէջ եղական: Բաշմաթիւ հայոց հետ դատաւարութեան հստակ ունեկեղիւր էի, ինչ որ լսեցի ահա կը հաշարեմ: Բայց նախ եղեւութիւնը երկու բառով պատմեմ:

Շարաթ մը առաջ հայ պատմնի մը, մօտ 18-19 տարեկան, քաղաքիս Պ. Պաղտատար Խըտրէլէզեանի օձիւր կը ներկայանայ եւ 1000 ոսկինոց փոխանակագրի մը վճարումը կը խնդրէ: Մնտուկը գործէն տեղեկութիւն չունենալով, թուլթը ներկայացնողը ուղղակի Պ. Խըտրէլէզեանին կը տանին: Պարոնը իբր իրմէն ստորագրուած փոխանակագիրը տեսնելուն պէս կեղծ ըլլալը կը հասկնայ, եւ տղուն քանի մը հարցումներ կ'ուղղէ, թուլթը ուրիշ անգամ ըլլալը իմանալու համար, Պատանին առանց ո'րեւէ բացատրութիւն տալու կը պահանջէ 1000 ոսկիին անմիջական վճարումը, մինչեւ իսկ սպառնալիքներ ալ ընելով: Բաղքիս վաճառականները միշտ կը կասկածին թէ «անոնցմէ» նաեւ Մանչէսթըր ալ գէմներին ելլողներ կրնան դռնուիլ: Պ. Խըտրէլէզեան կը կաս-

կածի թէ ինչ որ կը վախնային ահա գլուխուն կուգայ: Դուրս ելլելով կ'երթայ խորհրդակցի ու թիշ վաճառականներու հետ, եւ անոնց խորհրդովը երկու Տէրէֆիկ կը բերէ հետը եւ պատանի ու փոխանակագիր կը յանձնէ դատական իշխանութեան. չաբաթէ մը ի վեր տեղիս հայերը այս գործով կը զբաղէին, կարծելով թէ իրենցմէ տուրք հաւաքելու նոր դրութիւն մըն է: Այս գործն էր ահա որ երէկ դատարանին ներկայացաւ. բոլոր հոյ վաճառականները ներկայ կը գտնուէին դատաստանին, որուն մէջ հայ մը թարգմանի պաշտօնը կը վարէր: Սակայն խռովեալ սրտերը շուտ հանգստացան, օրինական քանի մը հարցումներու տրուած պատասխաններէն, որոնք ծիծաղ գրգռեցին: Հասկցուեցաւ թէ ձեռնարկը վախճուածին չափ լուրջ չէր: Այդ հարցումները վանց կ'ընեմ, և գործին վերաբերեալ կէտերը կ'ամփոփեմ, հարց-պատասխանիով:

Դատարար. Այս թուղթը քեզի ո՞վ տուաւ.

Պատասխան. Այդ քո գործը չէ:

Դատարար. Մըծթը Խըտըրէլէզեան կը յայտարարէ թէ ատանկ պարտք մը չունի:

Պատասխան. Այդ էլ իրա գործը չէ: Դաշնակցութեան Ընդհանուր Ժողովը վճռել է թէ այդ նրա պարտքն է, ուրեմն նրա պարտքն է:

Դատարարն ալ կարող չեղաւ ժպիտը զսպել: Պ. Խըտըրէլէզեան իրողութիւնը հասկնալու համար քանի մը գիտողութիւններ ըրաւ իր փաստաբանին միջոցաւ:

Պ. Խըտըրէլէզեան. Տղա՛ս, այդ փոխանակագիրը կեղծ է, ես գեռ ամիս մըն է որ Մանչըսթըր հաստատուած եմ, մինչդեռ այդ թուղթին թուականը երեք ամիս առաջուան է:

Պատասխան. Ախր Դաշնակցութիւնն ինչո՞վ է մեղաւոր որ դու էտ ժամանակ այս տեղ չես եղել: Այդ քո գործն է և ոչ թէ Դաշնակցութեան:

Պ. Խըտըրէլէզեան. Այս ստորագրութիւնը իմ գրովս ալ չէ:

Պատասխան. Ի՞նչ անունը Պաղտասար չէ՞ է:

Պ. Խըտըրէլէզեան (խնդալով). Այո՛:

Պատ. Ի՞նչ ազգանունը Խըտըրէլէզեան չէ՞ է:

Պ. Խըտըրէլէզեան (խնդալով). Այո՛:

Պատ. Այս քաղաքում էտ անունով, էտ ազգանունով մի ուրիշին էլ ճանաչում եմ:

Պ. Խըտըրէլէզեան (խնդալով). Էյ ո՛չ:

Պատ. Էլ ինչի՞նչ ես բզկանում եմ: Անունը քոն է, ազգանունը քոն է, մի ուրիշին չես ճանաչում էտ անունով, էտ ազգանունով, էլ ինչի՞նչ ես ասում թէ սա քո պարտքը չէ:

Պ. Խըտըրէլէզեան (ցաւակցական շեշտով). Բայց տղա՛ս, գիրը իմն չէ:

Պատ. Էհ, մի համարաբանական քեզինց լաւ է գրում քո անունը. էլ ի՞նչ ես ցանկանում:

Պ. Խըտըրէլէզեան. Ընդունման թուականն ալ փետրուար 31 է. փետրուարը երբէք 29 օրը անցած է: Քեզի խալ են ըրեր տղա՛ս:

Պատ. (վսեմօրէն). Պարո՛ն, Դաշնակցութեան Ընդհանուր Ժողովը վճռել է թէ փետրուար ամիսը պէտք է 31 օր լինի, ուրեմն 31 օր է: Դաշնակցութեանս վճիռները վերաքննութեան չեն ենթարկվում:

Ալ որուն վրայ հոյի մնաց: Խնդալէն կողերնիս կը բռնէինք. Պ. Խըտըրէլէզեան եղելութիւնը հասկցաւ. ըստ այնմ ալ հրահանգներ տուաւ իր փաստաբանին, որ դատարանին յայտարարեց թէ պատանին ոճրագործ մը չէ, այլ պարզապէս ոճրագործներու միամիտ եւ անգիտակից գործիք մը, հաւատալով իր ներկայացուցած թուղթին վաւերականութեանը. ուստի ոչ թէ պատժի պէտք է ենթարկուի այլ կարեկցութիւն գրաւէ. Դատարարն ալ որ պատանին հոգեկան վիճակը հասկցած էր, ներողամիտ գտնուեցաւ, ու վճոհեց տղան քիչ մը առեն առողջատուն մը պահել տալ եւ ետքէն զրկել եկած տեղը:

Թարգմանը երբ պատանին իմացուց թէ իր գործը լաւ վերջացած է, տղան ուրախութեամբ սկսաւ գոչել.

—Ուրեմն փողերը տալին են զէնքերը պէտք է գնե՛ն:

Սակայն շուտ յուսախաբ ըլլալով սկսաւ տրտմալին աղաղակել, աչքերը արցունքով լեցուած.

—Փողերը չե՞ն տալիս, փողերը չե՞ն տալիս:

Ու հանդարտօրէն արհամարհական ձայնով մը աւելցուց, դուրս տարուելու բռնէին.

—Այ աղա՛ս Անգլիա որ ասում են սա է՞. ես թքել եմ այդ աղատութեան վրայ որ իրան թոյլ է տալիս շնորհունել մի յեղափոխական մարմնի. վճիռը, և հաւատալ մի ինչ որ կեղտոտ չարչիի խօսքերին: Թուրքը իսկի սրանցից լաւ է. Թուրքիա. յում մենք անում ենք, առնում ենք ինչ որ մեր քէյֆէրը ցանկանում է: Ախր աղատութիւնը այս պէս է լինում:

Ռեկլեդիր

(Նոր կեանք)

ՍԱԵՊՏԻԱ

ՍԻՐԱՅԻՆ ԿԱՅԾԵՐ

ՀՐԱԺԵՇՏ ԵՐԶԱՆԻԿ ԳԵՐՈՒԹԵԱՆ ՄԸ

Լեռան մը հարթ սահասանէն, կը յիշես,
Կախակի մը փայտեղէն ուսուսումն.
Տոսիկ տոսիկ ինծի գալիք, ուր տեղ ես
Արքանայով խոհանքներես երազում,
«Աս ի՞նչ աստղեր փայլոյում»
Հառաչէի ողբազին.
Ի տես յիմադ աջերում
Որ արհիդ յոյզ մասնէին:

Ես առի՞ծ մը, դուն աղաւնի անմեղակ,
Զիշտե՛ս, ինչպէ՛ս գերեցիր զիս պնդօրէն,
Եւ առի՞ծը գետին փռուած ողորմով՝
Կը յիշե՛ս դուն, ա՛խ մը թուոց իր շուրթէն:

Արեւ, յուսին միասեղ
Տեսայ գետնէն ալիք մէջ,
Զոյգ մը կանդեղ յուսայեղ
Որ ափոէին հոտ անշէջ:

Լարիպ դուրպէք այս երկրի մէջ ինչո՞ւ դուն.
Կրակն եղար խորոպող զիս խկապես.
Երկու նարինջ կուրծփող վրայ տրոխուն,
Ո՛վ քեզ զրկեց շանքահարեղ զիս աշապես:

Ո՛յ սուրն ունիմ ոչ սրաք,
Ո՛յ աչ սիրոյ կեռ սուին,
Որ ներշնչեմ քեզ կրակ
Յոյզ ու կրակ տոխիին:

Գնա՛ աղջիկ, գնա՛ աշտո՛ւ փնտռել,
Տեղեմաքի նուրբ մասը որ գայ քեզի
Ա՛խ, մշտեղակ կուրծփող վրայ նուազեղ
Սերը անմահ, սերն անմահն քա՛ն թէ զի:

Զի ես չունիմ սուր սրաք,
Ո՛յ աչ սիրոյ կեռ սուին,
Որ ներշնչեմ քեզ կրակ
Յոյզ ու կրակ տոխիին:

ԱՊՐԻ—ՆԱՏԱՐԱ

ԳՕԳԱՐՃԱՅԻ ՏՕՆԱՎԱՃԱՌԸ

Անցնալ երկուշաբթի առաւօտ, ժամը 4ին, թէեւ օրը ամպամած ու երբեմն ալ անձրեւ կը կաթկթէր, բայց նեկրիժե (անյարգար) կերպարանքով խել մը խաթուններ, տիկիներ ու օրիորդներ՝ ձեռքերնին ունենալով մէյմէկ պղտիկ սափոր կամ շիշ, բարեպաշտ գէմքով կը դիմէին Գօգարձայի աշաղման, ուր առաջին անգամ իրենց բիթերուն ուշադրութիւնը կը հրաւիրէին խունկին և... օտման ֆեսայիին հոտերը. որովհետեւ, հոտաւարի մը տակ կեցող բահանայն երբ ձեռքի խաչովը հաւատացեալները օրհնելով «սա պահեսցէ զմեզ» կըսէր, քիչ մը անդին ալ ուրիշ բահանայ մը՝ «և սա պահեսցէ զմեզ» ըսելով շիշ ֆեսայիին կը դարձնէր: Անշուշտ պիտի հարցնէք թէ տէր պապան ինչո՞ւ այսչափ կանուխէն կ'աճապարէր քեզապի մասին. մենք ալ ձեռքի պէս հետաքրքրուեցանք և բացատրութիւն ուզեցինք ֆանսիյեժքիի (լուստրար) օգնականէն որ սապէս պատասխանեց. «Որովհետեւ բահանայը շատ շունչ պիտի վատեն, պէտք է լուսնունդ առած ըլլան. ժամը 5էն ետքը յուսայեղի ժամանակ ըլլալով, մինչև իրիկուն գլուխ քերելու տունն չպիտի ունենան, ո՛ւր մնաց հաց ուտելու, հետեւաբար մինչև ժամը 5ին անպատճառ ու տել խմելու են»: Այս որկրամոլական բացատրութիւնը լսելէ ետքը մեկնեցանք աշաղման, ուստի ժողովրդային սա առաջը յիշելով:

Սար ու ձոր,
Տէր Բօքի փոր,
Գիշեր ջորեկ
Կ'ասէ «տո՛ւր, տո՛ւր»:

* *

Յորեկէն ետքը կը սկսի ոգեւորիլ տօնավաճառաւորներն. ամեն դասակարգ քիչ շատ իր ներկայացուցիչները զրկած է հոն: Առտուն անյարգար կերպարանքով աշաղման այցելողները հիմա մէկէն ի մէկ չես կրնար ճանչնալ, հագուած, սգուած, գլխարկ դրած և գէմքերնին կարմրեցուցած են: Երկուսն բազմութեան մէկ մասը՝ օրուան մը կեանք ունեցող յիշկէ սրճարաններուն մէջ աղած ձուկի պէս իրարու քով սեղմուած՝ գոռաբաւ շունչ կ'առնեն. Մէկ մասն ալ մարգագետնին վրայ հոս հոն նստած, սակառնին առջեւնին կը ճաշեն. ոմանք ալ գետինը նստելէ նախապատիւ կը համարին մոմակալներու պէս 4-5 ժամ ճամբուն երկայնութեան անշարժ կենալը: Կը տեսնուին կարգ մը հաւկիթ պարոններ, որոնք կերթան կուգան սիրային ակնարկներ կուղղեն օրիորդաց ու տիկնանց, եւ ի պատասխան կընդունին անոնցմէ բիթի վերաբաշումներ. մէկ երկու օրիորդներ ալ ծառի մը ետեւ կեցած, իրարու հայելի կըլլան ու գէմքի շաւրները քաղցէլքով իջ կընեն հետեւնին բերած նետիկ բուստայով: Մերթ ընդ մերթ կը լսուէր գնդուի մը տափուլ զուռնային ձայնը, որուն յաճախ կընկերանային իրենց գոհններովը մարգագետնին վրայ արածող էշերը, որոնց ձայները ախորժելի ազդեցութիւն մը կընէին մեր ամենուս վրայ:

* *

Մեր ընթերցողաց վաղածանօթ Օդիկ սուտուն ալ որ ասանկ առիթները ամենեին ձեռքէ չի փախցնէր ու օրը օր կընէ, իր աղջիկները ու մէկ քանի դրացուհիները գլուխը ժողուած, նոյն օրը, Գօգարձա տանող այգիներուն մէջի ճամբուն վրայ մեծ ընկուզենիի մը հովանիին տակ լուսնունդը ու զուարճանալէ ետքը, իրիկունան գէմ աղջիկներուն առաջարկեց «Վիճակ» մը հանել, այս առաջարկը ուրախութեամբ ընդունեցաւ անոնքն ու «Վիճակ»ը հանեցին, որուն մանրամասնութիւնը տեղւոյ անձկութեան պատճառաւ կը թողուէր յաջորդ թերթին:

ՋԱԻԹԱԿ

ՀԵՌԱՂԻՐԱԿԱՆ (ԱժԱՆԱ ԲՈԺՈԺԻԿ ԵՎ ԸՆԴԻ)

Բաժնաւոր

Տիրահաշակ առաւ փախաւ կեղծարար մը, իր խոստովանութեամբը աղքատին հացը գողցող աներես մը ու տառան առնուած տնտեսաւոր ֆարթ-ֆուրթ մը՝ իրիկունները գինետան մասաին շուրջը եռոտանի կազմելով թուլթեր աղտոտելու վրայ են. . . խոյա պէգիմ լեցնելու համար, իբր ստորագրութիւն գործածելով կէտեր, կիստեր, ինչ-չէտեր, խուրսաներ, լիւրեմեր ևն. ևն.